ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 17. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրների լուծումը

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրների լուծման ուղիները սահմանվում են ջրօգտագործման առանձին ոլորտների զարգացման ռազմավարություններով, հայեցակարգերով, ինչպես նաև ծրագրերով, որոնք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 18. Խմելու-կենցաղային ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում խնդիրները, դրանց գերակայությունը և ոլորտի զարգացման հեռանկարները

1. Խմելու ջրի ոլորտի զարգացման հեռանկարներն ամրագրվում են խմելու ջրի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրում, հայեցակարգում, ինչպես նաև ծրագրերում, ~~որոնք~~ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Խմելու-կենցաղային ջրամատակարարման համակարգերի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մշտապես իրականացվում են դրանց հուսալիության անհրաժեշտ մակարդակի պահպանմանն ուղղված միջոցառումներ:

3. Խմելու ջրի ոլորտում խնդիրների լուծումը իրականացվում է՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները.

1) պահանջվող որակի և անհրաժեշտ քանակի ջրով ապահովումը.

2) անընդմեջ ջրամատակարարման ապահովումը.

3) քաղաքային և գյուղական բնակավայրերում անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների զարգացումն ու բարելավումը՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովումը.

4) *(կետն ուժը կորցրել է 07.07.22 ՀՕ-317-Ն)*

5) ջրամատակարարման համակարգերում ջրի կորուստների նվազեցումը.

6) էներգատար ջրամատակարարման համակարգերի հնարավորինս փոխարինումը ինքնահոս համակարգերով.

7) ջրի հաշվառման համակարգի ներդրումը և զարգացումը, ջրի տնտեսմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

8) կեղտաջրերի մաքրման կայանների անհրաժեշտ վերանորոգումը և նորերի կառուցումը.

9) ջրօգտագործողների կողմից արտադրական կեղտաջրերի նախնական մաքրում իրականացնելու մեխանիզմների ստեղծումը.

10) օրվա կարգավորիչ ջրամբարների վերանորոգումը և նորերի կառուցումը.

11) ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ենթակառուցվածքի զարգացումը.

12) համակարգի կառավարման մեխանիզմների կատարելագործումը.

13) ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը.

14) կեղտաջրերի մաքրման նոր տեխնոլոգիաների ներդրումը.

15) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մակարդակի բարձրացումը (տեխնիկական վերազինում և կադրերի պատրաստում).

16) ջրամատակարարման համակարգերի վերականգնման և կառուցման գործընթացում արդիական տեխնոլոգիաների կիրառումը:

4. Ջրամատակարարման ժամերի քանակը և քսանչորսժամյա ջրամատակարարմանն անցնելու ժամանակացույցը՝ ըստ կենտրոնացված ջրամատակարարման համակարգերի սպասարկման տարածքների և(կամ) ենթատարածքների, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Անապահով սպառողների ու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասար հասանելիության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև սուբսիդիաների տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(18-րդ հոդվածը խմբ., փոփ. 07.07.22 ՀՕ-317-Ն)

Հոդված 19. Ոռոգման ոլորտի խնդիրները և զարգացման հեռանկարները

1. Ոռոգման ոլորտի զարգացման հեռանկարներն ամրագրվում են ոռոգման ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրում հայեցակարգում, ինչպես նաև ծրագրերում, ~~որը~~ որոնք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ոռոգման համակարգերի զարգացման հիմնական նպատակն է գյուղատնտեսական մթերքների հուսալի արտադրության ապահովումը, բերքատվության և գյուղատնտեսական արտադրության եկամտաբերության բարձրացումը, շահագործման և պահպանման ծախսերի կրճատումը:

3. Ոռոգման ջրի խնդիրների լուծումը իրականացվում է՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները.

1) ծառայությունների հասանելիության, մատչելիության և որակի բարձրացումը.

2) սուբսիդավորման քաղաքականության հասցեականության բարձրացումը.

3) մեխանիկական ջրամատակարարումից ինքնահոսի անցումը.

4) ոռոգման ոլորտի ենթակառուցվածքների ընդլայնումը և զարգացումը, ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրումը.

5) ոռոգման համակարգերի կառավարման և շահագործման արդյունավետության բարձրացումը.

6) հաշվառման և վճարների հավաքագրման համակարգերի բարելավումը, այդ թվում՝ տարբերակված սակագների համակարգի ներդրումը.

7) մասնակցային կառավարման համակարգի զարգացումը՝ ջրօգտագործողների ընկերությունների և դրանց միությունների ստեղծման ճանապարհով.

8) հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովության բարձրացումը.

9) ոռոգման նորմերի և ռեժիմների կարգավորումը.

10) հողերի մելիորատիվ վիճակի բարելավումը.

11) առանձին տարածաշրջաններում սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունը մեղմացնելու նպատակով ոռոգման համակարգի ուղղակի սուբսիդավորման դադարեցումից տնտեսված բյուջետային միջոցները Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ուղղի այդ տարածաշրջաններ: